

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мпактъ»,
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ՄԵԼԻԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Երազարութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առ շաբաթը).

Ծայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ծայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի դուռնայի որոշումը.— Ներքին Տե-
սիստիկ. Մամուլ. Մատենագրութիւն. Նա-
մակ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան.
Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍԻՍԹԻԿԻՆ.
Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրեր.—
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՏԱՐԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Ամերիկայից:

ԹԻՖԼԻՍԻ ԴՈՒՄԱՅԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Թիֆլիսի քաղաքային դուռնայի երկու-
շաբթի, յունիսի 4-ին, մի կարևոր որո-
շում կայացրեց, այն է հաւանութիւն
տուեց, որ քաղաքը ունենայ իր սեփական
խանութիւնը միս վաճառելու հա-
մար, և նշանակեց ամբողջ գործի կազմա-
կերպութեան համար 50,000 ռուբլի
գումար: Այդ որոշման համաձայն, քաղա-
քային ինքնավարութիւնը պէտք է իր
ձեռքն առնի մասցու կենդանիներ գնելու,
նրանց մորթելու, միսը տեսակների բա-
ժանելու և լաւ յատկութեան միս մատա-
կարարելու ամբողջ գործը:

Ներկայումս Թիֆլիսի վաճառանոցը ոչ
միայն չէ նպաստում, որ միս մատակարա-
րութիւնը լինի կանոնաւոր կերպով, այլ
և ուղղակի արգելք է հանդիսանում այդ
կարևոր գործի բարւոքման: Եթէ ներկայ
պայմաններում գտնվէին նոյն իսկ կալուա-
ծատէրեր կամ գիւղացիներ, որոնք ըզ-
բաղվէին յատկապէս անասնապահութեամբ
և մասցու կենդանիներ պատրաստելով
Թիֆլիսի վաճառանոցի համար, այդ ան-
ձինքը անկարող կը լինէին կատարածել
իրանց դիտաւորութիւնը, որովհետև
Թիֆլիսի վաճառանոցի կողմից նրանք
չէին գտնի խրախուս և պաշտպանութիւն:
Թիֆլիսի վաճառանոցում լաւ միսը և վատ
միսը մի սակագին ունեն, ենթարկված են

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

Բոստոն, մայիսի 20-ին

Կարգաւոր յօդուած՝ կարելի է շատեր խոր-
հեն, թէ ինչ հարկ դրաղիկ նոր հրատարա-
կուող շաբաթաթիւթով մը, երբ այսօր, մանա-
ւանդ արտասահմանը՝ մէկը միւսին ետեւ յա-
ջորդաբար երեւան կուգան հայ լրագրեր ու
հանդէսներ և կարծատես կեանքէ մը վերջ՝ կը
դադրեն գոյութենէ:

Շիտակը չի ալ արժեք դրաղիկ այդ կարգի
հրատարակութեանց մի մեծ մասովը, քանի
որ անոնք հեռու են որոշ գաղափար մը, ուղ-
ղութիւն մը ներկայացնելէ եւ միայն գրական
մարմաշներու զոհանքով տալու կոչումն ունին:
Ամենց կարգէն չէ սակայն Բոստոնի «Կոնցալ»
շաբաթաթիւթը. նա ունի իր որոշ կրօնական
գաւառանքներ, իր յատուկ տեսակետը օրուան
ինդիքներու վերաբերմամբ, ինչպէս նաեւ իր
գործելու ուղղութիւնը:

«Մշակ» ընդհանրապէս կը լինի, թէ վանի
զժառից պատահարներէ վերջ, հայ լրագիրնե-
րու մէջ յիշուեցաւ Մ. Ալլէն անուն երիտա-
սարդ միսթոնարի մը անձնուէր գործունէու-
թիւնը Վասպուրականի սովորաւոր ժողովրդին
հայ ու հանդերձ ցրուելու: Ամերիկայի երի-
տասարդը ծնած լինելով Հայաստան, հոն ան-
ցուցած լինելով իր մանկութիւնը, շատ լաւ
ծանօթ էր հայ լեզուին և բարբերուն, ամե-
նուն ծանօթ էր նոյնպէս իր համակրութիւնն
ու սէրը դէպի Թիւրքիոյ տարաբաղդ հայերը:
Տեսակ մը երիտասարդական, առջը աշխոյժ
ցոյց կուտար նա օգնելու Վասպուրականի
խեղճ գիւղացիներուն, որոնք Աստուծոյ խօս-
քէն աւելի ցորենի սերմի պէտք ունէին իրենց
արտերը ցանելու:

Նոյն համակրութիւնը ցոյց տուաւ միսթո-

մի ընդհանուր տակաւի: Թիֆլիսի վաճա-
ռանոցում սովորութիւն չը կայ գնած
մասցու կենդանիների համար անմիջապէս
փող վճարել, այլ ամեն բան կատարվում
է պարտքով և յաճախ այնպիսի պարտքով,
որ տարիներ շարունակ չէ հատուցվում:
Այդ պատճառով անասնավաճառները
աշխատում են խուսափել Թիֆլիսի վաճա-
ռանոցից: Հիւսիսային կովկասի անասնա-
վաճառները մի քանի անգամ փորձել են
մասցուներ բերել Թիֆլիս, բայց ամեն
անգամ փնապել են, պատժվել են և այն-
պէս հեռացել: Անասնավաճառներից շա-
տերը աշխատում են այժմ, եթէ յարմա-
րութիւն ունեն, ուրիշ վաճառանոցներ
գնալ, օրինակ Բաքու, ուր առուծարիսի
պայմանները աւելի նպաստաւոր են:

Երբ որ Թիֆլիս քաղաքը իր ձեռք կանի
մասցուներ գնելու գործը, այն ժամանակ
մեր երկրի անասնավաճառները կարող կը
լինեն կանոնաւոր յարաբերութիւններ
ստեղծել հեղինակաւոր հիմնարկութեան
հետ, որը կարող է անմիջապէս վճարել
ապրանքի գինը կամ ապահովել հաստատ
կերելովով, այն ժամանակ անասնավաճառը
կը դրաղիկ ագնուացնելով անասնուներին
և բարւոքելով մի յատկութիւնը:

Այդպիսով Թիֆլիս քաղաքի ծրագրած
գործը օգտաւետ կը լինի ոչ միայն քա-
ղաքի ազգայնականութեան շահերի, այլ և
մեր երկրի գիւղացիների ազգայնականութեան
շահերի համար, որ քաղաքից մէկ կը գլայ
իրան կատարելագործութիւններ մտնելու
իր անասնապահութեան մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍԻՍԹԻԿԻՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

«Բաղմաւալ» ամսագիրը շատ տխուր գոյ-
ներով է նկարում հայ-կաթօլիկների ազգային

նար Ալլէն դէպի հայերը, երբ Ամերիկա դառ-
նալով հոն տեսաւ իր հին ծածկներէն շատե-
րը: Ներկայ էր նա մեր ժողովներուն, հան-
դէսներուն, եւ իր գեղեցիկ ու մաքուր հայե-
րէնով կը քաջալերէր պանդուխտ գաղթական-
ները՝ օգնելու հայրենիքի որբերուն, սովախին,
զարոյցներուն: Ամերիկայի բոլոր հայաբնակ
քաղաքներու թեմերն սովորած էին իր ներ-
կայութեանը, երբ որբերու դրամ հանգանակե-
լու, գրադարան մը, լսարան մը կազմելու հա-
մար ատենախօսի մը պէտքը կար: Եւ երբ բա-
րեքաղղ օր մը, միջնադարեան միսթոնար Հեյ-
քօքը, ամբողջ Ամերիկայի հայերէն աստուած
մօրեւանդ ծերունի մը, իր պաշտօնէն կը հեռա-
նար ապամայր իր դիրքը տալու հանրաժանութի
Ալլէնին, մեր ուրախութեանը չափ չի կար:

Ամերիկայի մէջ տեղական միսթոնարական ըն-
կերութիւն մը կայ, որ հոս եկող օտարներու մէջ
աւետարան կը քարոզէ: Այդ ընկերութիւնը Թիւր-
քիա միսթոնար զրկող Պօտ ընկերութիւնէն ան-
կախ է, թէեւ իրարու հետ չուն սերտ յարաբերու-
թիւն ունին: Շնորհիւ այդ միսթոնարական ըն-
կերութեան դրամական նպաստներուն, Ամե-
րիկայի գլխաւոր հայաբնակ քաղաքները կազ-
մուեցան հայ-բողոքական եկեղեցիներ իրենց
պաշտօնեաներով, որոնց տալու անասնակին մէկ շատ
փոքր մասը կը վճարէին մեր բողոքական ազ-
գակիցները: Այս քարոզչներու վրա հսկելու
պաշտօնն էր, որ կը յանձնուէր երիտասարդ
միսթոնարին:

Նպատակահա զուրս է պատմել թէ ինչ գործ
տեսան այս կրօնաւորները, չեմ գիտեր որքան
ազդել կրցած են անասնակ երիտասարդներու
բարուց վրա, գիտեմ, սակայն, թէ ազգային
տեսակետով իրենց ազդեցութիւնը եղած է
բացասական, այդ չըջանալէն դրամական նը-
պաստներ արուած չեն որբերու, գրադարան-
ներու, հայրենիքի դպրոցներու եւ այլն:

Չորս ամիս առաջ քարոզչներու այս խըմ-
բակը, Ալլէնի առաջնորդութեամբ, սկսաւ հրա-
տարակել «Կոնցալ»ը, Երեւոյթը շատ հետա-

դրութիւնը: Այլք առաջ այժմ ոչ մի նշանա-
ւոր ոչ չը կայ. եւ սակայն հայ-կաթօլիկ հա-
տարակութիւնից են դուրս եկել Աղամեան,
Պէշիկիշեան, Փորթուզալ փաշա, Տիգրան
Երկաթ, Մերենց: Սրանք բոլորը այժմ գերեզ-
մանում են հանգչում: Իսկ ապրողները:

Օտարազգի դաստիարակներ հայրենամոլ
գաղափարներով արշաւեցին հայ հոգովէա-
կան հասարակութեան վրա. եւ նոյն ատեն
անոր ազգային ոգին և գրականութիւնը
հասաւ ճգնաժամին: Փոքր Ասիոյ, Պոնտոսի
եւ Վասպուրականի այլ եւ այլ կողմերը կը
բացուէին գաղղիական վարժարաններ. տա-
րակոյս չի կայ, որ օտար դաստիարակները
պիտի ներգործէին հայ մանկուոյն վրա ոչ
հայկական ոգով: Անոնք մեղմօրէն հայ ման-
կուոյն կը փչէին օտարամոլութիւնը, կրօ-
նական հոգեւոր կը սկսէին գաղղիներէն աւան-
դել. եկեղեցիներու մէջ հայ օգոյցներու
եւ մեղեդիներու կը փոխանակէին գաղղիերէն
երգեր եւ աղօթքներ, չարթուան մէջ մի
անգամ տեղի կուենայ հայերէն լեզուի ու
ստեղծութիւն, իսկ միւս ամեն գիտութիւն և
պատմութիւն կը կատարուէ գաղղիերէն լե-
զուով: Եւ այս կերպով բռնաբարուած էր
հայ մանկուոյն ազգային ոգին և լեզուն:

Այժմ, ի հարկէ, աւելի լաւ հասկանալի է
Հ. Շարմառանի եւ նրա նմանների գործու-
նէութեան բուն շարժառիթը: Գրիտառի այդ
փառիսցի փոխանորդները վախճաւուն էին
բարձրացել, թէ հայ հերետիկոսներին դարձի
բերելու համար Աստուած միայն է քրդերի
հետ, եւ փող էին ուղղում՝ հոգիների փրկու-
թիւնը կատարեալ դարձնելու համար: Բայց
հոգու փրկութիւն— դա մի դատարկ ձայն է.
իրականութիւնն այն է. որ այդ ֆանատիկոս-
ները ֆրանսական ազդեցութեան կոյր գոր-
ծիքներ են Արեւելքում: Հայ-կաթօլիկներն էլ
հօ հերետիկոսներ չեն՝ Շարմառանների ուղ-
ղափառութեան տեսակետից. բայց ինչու չեն
թող տալիս նրանց աղօթել իրանց լեզուով,
սովորել իրանց լեզուն: Պարզ է, չափազանց
պարզ, այդ պարոնների իսկական նպատակը
Եւ մենք, որ նոր չը պիտի ճանաչենք դրանց,

քրքրական էր. պիտի տեսնէինք թէ իրենց
ամբիօններէն ազգի ամեն գործիչներ քննա-
դատող պատմաւորները ինչ ընդունակութիւն
ցոյց պիտի տային, մասնաւոր երբ թերթին
նիւթականն ալ ապահովուած էր ամերիկաց-
ւոց տուած նուէրներով:

Յաջորդաբար երեւցան 10—12 թիւեր. յու-
սախարութիւնը կատարեալ եղաւ: Սկիզբէն
մի քանի փրկուող յօդուածներ, գեղեցիկ ձե-
ւերով ու դարձածներով արտայայտուած
միջակութիւններ, կենդանի, որոշ ու կտրուկ
լեզուով գաղափար մը, կարծիք մը բացատրե-
լու քաջութիւնը տեսնել զուր տեղ ապասե-
ցինք: Բացառութիւն կրնանք համարել Մի-
նասեանի մի քանի գիտական յօդուածները.
երիտասարդը դեռ նոր ընթացաւարտ Ենյէն-
կուզար իր ազգակիցներուն մէջ ժողովրդա-
կանացնելու գիտական վերջին տեսութիւնները
աշխարհի ստեղծման եւ մարդու ծագման մա-
սին: Սակայն պատուելիները չէին ախորժի,
որ մէկը յանգչին խորհել թէ մարդը 100,000
տարիներէ ի վեր գոյութիւն ունի աշխարհի
վրա եւ այլն: Հաւատաքնական ատեան կազ-
մեցին, երիտասարդ ուսանողը ստիպուեցաւ
իր գիտական գաղափարները իրեն պահել:

Եթէ խնդրել հոս կանգ առնէր, եւ «Կոն-
ցալ»ը Ամերիկայի հայոց «Աւետարան»ը դառ-
նար, ինչպէս կանխաւ գուշակել էին շատեր,
զժգոհելու մեծ պատճառ մը չը կար, սակայն
երեւի զայրացած հասարակութեան անտար-
բեր դիրքէն, պատուելի խմբագիրները քանի
մը քայլ ալ առաջ գացին. «Կոնցալ»ը վերջին
թիւերով հրատարակուեցան կարգ մը յօդուած-
ներ, որոց ոգին երբէք չը համաձայնել իրենց
քարոզած կրօնի սկզբունքներուն: Աւետարանի
այս հեղ պաշտօնեաները կոպիտ ու անարդար
լեզուով յարձակիլ սկսան ամեն ձեռնարկի,
սակն կաղաքականութեան վրա, նոյն իսկ հոս
ու հոն նախատեսելի Բաֆֆի անունը եւ գոր-
ծերը, ծաղրեցին ազգային լսարանները, մէկ
խօսքով ինչ որ իրենց չըջանէն դուրս գո-

պիտի ցաւենք, որ մեր հայ ազգը այնքան խեղճ
ու ողորմելի է, որ անմոռնչ զոհ է դառնում
այդ առաքեալների ձեռքին, մոռանալով իր
ազգութիւնը, իր լեզուն: «Բաղմաւալ»ը, յի-
շատակելով, որ Միսթոնարեան զարոյցները փոքր
ի շատէ մրցում են այդ օտարացող հոսանքի
դէմ, ստիպված է խոստովանել, որ, այնուամե-
նայնիւ, շատ բան չէ կարելի անել դրանով:
Ու յուսահատութեամբ բացականչում է. «Եւ
խաւարը կիչիւն»... Իշխում է այդ խաւարը
հայ ազգի այն ստուարաթիւ մասի վրա, որ
հպատակված է Հոսմի եկեղեցուն, հպատակ-
ված է օտարամոլ հայ-կաթօլիկ առաջնորդնե-
րին եւ հոգեւորականութեան, որոնք շատ հին
ժամանակներից ցոյց են տուել իրանց կատաղի
թշնամութիւնը հայութեան դէմ: Ի՞նչ պէտք է
անել: «Բաղմաւալ»ը ասում է:

Վարժարաններուն հետ լրագրութիւնը մեծ
գործ կրնայ կատարել. այդ երկուքը կարող
են հասարակութիւնը իր պահանջուած պատ-
ւոյն մէջ պահել ու հաստատել. առանց այդ
երկու ուժերուն, հասարակութիւնը մարդ-
կութեան պատարակելի փոստ ու չորացած
ձիւղն կը դառնայ: Չի մշակել մանկուոյն
բնիկ լեզուն, չաւանդել բնիկ գրականու-
թիւնը, ազգային եղեմագործութիւնն մըն
է: Աւետիքեան դարու հնացած արիւ-
նարու դէպքերն պէտք չէ պատրուակ
բռնել, ատելութիւն մղելով դէպի հայ լեզուն
եւ գրականութիւնը, որ հաւատարապէս
համարին հայութեան հարազատ ժառանգու-
թիւններն են եւ ոչ սեփականութիւնն այս
կամ այն դաւանանքի: Հայ հոգովէական
հասարակութիւնը պէտք է գործէ: Անհրա-
ժեշտ է հարազատ լեզուին եւ գրականու-
թեան վրէժանդի ըլլալ եւ կարեւորութիւն
տալ: Եւ այս կարելի է, ուժ տալով ազգային
վարժարաններու եւ հաստատելով յատուկ
թերթեր: Եւ քանի որ համարին ազգիս մէջ
իւրաքանչիւր տարբեր դաւանանքի հասա-
րակութիւնը ունին իրենց յատուկ մամուլը,
օրինաւոր չէ որ նաեւ հայ հոգովէական հա-
սարակութիւն ունենայ իր ժողովրդական
հայախօս լրագիրը, որ խորշումները ջնջէ,
օտարամոլութիւնը սանձահարէ, ցնցէ դա-

յութիւն ունէր: Եթէ քննադատութիւնը կա-
տարուէր ուղղամտութեամբ, առանց կուսակ-
ցական նկատումներու եւ կիրքի, այն ատեն
մէկը չէր մեղադրէր իրենք, զոնէ չէինք տա-
րակուսի իրենց անկեղծութեանը վրա. ա-
կայն այս դրութիւնը անկարելի է, որ չառա-
ջանէ նոր վէճեր ու բաժանումներ. եւ մեր բա-
րեկամները այս բնութեւնը չափ խելք ունին ան-
շուշտ:

Ի՞նչ դեր կատարեց հայաստէր միսթոնարը
այս վէճերուն եւ թերթին ուղղութիւնը գծե-
լու գործին մէջ: Ինչու երբեմն ազգային ձեռ-
նարկներն ու յոյսերը քաջալերելէ վերջ այսօր
աւարբեր գոյնով հրապարակ կուգայ, այս հար-
ցումներու պատասխանը չեմ կրնար գտնել
Որոշ է միայն թէ «Կոնցալ»ը դադարելով ազ-
գային ընդհանուր հանգամանք ունենալէ,
զուրկ ազատական լայն ըմբռնումներէ, վերջա-
պէս դարձաւ խուճը մը մարդու խաղաղիւր,
շատ նեղ չըջանի մէջ ապրելու սահմանուած
խեղճ դոյնութիւն մը, որ անկարող է լուրջ եւ
հանրային նշանակութիւն ստանալ: Նոյն երե-
ւոյթը շատոց ի վեր տեսնուել է նոյն իսկ
բողոքական հասարակութեան մէջ: Անոնք, որ
մտածելու եւ դատելու ընդունակ միտք, լայն
տեսութիւն ունին, կը ձգեն կրօնական նեղ
սահմանները եւ հանրային մեծ կեանքին մէջ
կուգան ապրելու. բողոքական եկեղեցին՝ այս-
պէս մէկը միւսին ետեւ կորսնցնելով իր ըն-
դունակ եւ կարող մասը, կը մնայ խաւարա-
միսներու եւ թունդ պահպանողականներու
ձեռքը:

Ամերիկայի հայոց մէջ աչքի զարնող հան-
րային մարդոց մեծ մասը հին բողոքականներ
են՝ որք սակայն իրենց կապը շատոց խզել
են եկեղեցիէ մը, որ պապականութենէ պա-
կաս աններդաշնակ հայածող չէ, եւ այս
այնքան զարմանալի կերպով կը լիջեցնէ՝ Բը-
քլի նկարագրած սկովտական բողոքական-
ութիւնը:

Արմէն

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի կոնսիստորիայի նախագահ Բագրատ վարդապետ թաւաքական, որ նշանակվել է սինօդի անդամ, ժամ օրերս կը մեկնէ իր պաշտօնատեղը՝ Եյմփածին:

Թիֆլիսի առաջին ցուցահանդէսում տեղի կունենան մի շարք զուարճութիւններ, այն է ներկայացումներ, կոնցերտներ, սինեմատոգրաֆիայի եւ ուրիշ ձեռնարկութիւնների միջոցով պատկերացոյցներ: Մեզ հաղորդում են, որ երաժշտութիւն պէտք է հրաւիրվի Լիբա-վայից, ուր միշտ լինում են գերմանական ե-րաժշտական խմբերը: Ներկայացումների հա-մար Թիֆլիս է դալիս անտրպրենսօր Ֆօրկա-տի: Կոնցերտները բաժնուստեղ կը բռնեն եւ մեր երկրի ազգագրական խմբերը, օրինակ հայկական, վրացական, թուրքական, Դաղըս-տանի երգողները կազմված խմբեր:

Ստացանք Վլադիմիր Սիբիրի (Սիբիր) լուսա-նկար Բուդապէսից 50 րուբլի ի նպաստ բժ-վ. Արծրունու ժողովրդական հանրամատչելի բրոշիւրների հրատարակութեան: Այդ փողը յանձնեցինք պ. Արծրունուն:

Թիֆլիսի քաղաքային դռան, յունիսի 4-ի նիստում, քաղաքային փոխանորդ ընտրեց իշխան Վ. Չէրքէզովին: Այդ պաշտօնի համար քուէարկվում էին իշխան Չէրքէզով, որ ստա-ցաւ 22 սպիտակ եւ 11 սև քուէ, եւ Մ. Ս. Շեստակով, որ ստացաւ 17 սպիտակ եւ 14 սև քուէ:

Ֆինանսների մինիստրի առաջադրութեան համաձայն, Պետական խորհուրդը թոյլատրեց կազմել 370,000 ռ. գրամագուրն՝ վազապա-հութեանը եւ գինեգործութեանը նպաստելու համար Թէրէք գետի վրա գտնվող ստանիցա-ներում եւ Լալարի չըլանում: Այդ գումար-ներից օգտվելու պայմանները կորոշէ Կովկասի պ. կառավարչապետը:

Յունիսի 3-ից Թիֆլիսի արքունական թատ-րօնում սկսեց իր ներկայացումները Մօսկվայի կայսերական թատրոնի արտիստ Պրալդինի խումբը: Խումբը իր դերերի համար ընտրել էր Ջուրբանանի «Մանուկայր» յայտնի դրա-ման Իսկ հետեւեալ օրը տալիս Ի. Ժիւնի «ՕՏԱ-րՅԱԿԱԿԱՆ» պիէսը: Մի բան, որ իսկոյն աչ-քի է ընկնում Պրալդինի խմբի ներկայացում-ների մէջ, դա նրա աշող անսամբլն է, գերա-կատարների համարաչա, ամբողջացող խաղը: Բնոր գառնում է իսկապէս մի բնական խո-սակցութեան եւ գործողութիւնների տեղը: Ջու-րբանանի պիէսի գլխաւոր հերոսուհի Մագ-դալի գերը խաղում էր Եւրօլիկան: Շնորհիւ ղերասանուհին խաղաց այդ գերը բոլորովին ուրիշ ձեւով, քան Պրալդինը մի քանի օր առաջ նոյն թատրօնում: Եւրօլիկան վերցրել էր աւելի հասարակ, աւելի հանգիստ չափ եւ այդ պատճառով հայրական տանից արտաք-ս-ված, երկար ու ձիգ տարիների ընթացքում թափառական կեանք վարած, իր հաստատա-կանութեամբ, երկաթէ տոկոսներով հարս-նաւոր անուն, համալիրարհային հոգի ստա-ցած, իր իբրեւ կնոջ իրաւունքների պաշտպան Մագդալին չէր ներկայացնում խորապէս տանջ-ված, հոգեպէս կերպարանափոխված մի հերո-սուհի, այլ միջակ զգացմունքներով եւ կրքե-րով անձնավորութիւն: Դերասանուհին աշո-ղ տարաւ 3-րդ գործողութիւնը, բայց այդ-տեղ, երբ հանդիսականները արտի թրթռո-ցով հետեւում են Մագդալին՝ այդ ուժեղ կնոջ եւ մի եւ նոյն ժամանակ քնքշող մօր ամբողջ զրամային, նա առոցնում է հանդիսականին: Այդպէս Պրալդին Մագդալին հօր, պ. Սուր-գիւնի Զօն-Կելլերի եւ Իլիինսկի պատարի դե-րերում, որոնց մէջ ցոյց տուին ընտրող գծեր եւ ամբողջացրած տիպեր: Երէկ, յունիսի 4-ին, խաղացին Ի. Ժիւնի «ՕՏԱՐՅԱԿԱԿԱՆ» դրա-ման թատրօնը կիսով չափ դատարկ էր, որ կարելի է բացատրել թէ վատ եղանակով եւ թէ պիէսի ընտրութեամբ: Խորհուրդը կը տա-միք մի կողմ թողնել «ՕՏԱՐՅԱԿԱԿԱՆ»-ի նման գրուածքներ եւ տալ կենսական հարցեր շուրջով, կենսաբան վերցրած պիէսներ: Հա-սարակութիւնը շատ բան է սպասում Պրալ-դինի խմբից եւ ուրախութեամբ կը յանձնա-կենքից վերցրած պիէսները: Այսօր, չորեք-շաբթի, խումբը կը ներկայացնէ Դոստօեփու-«ԱՊՈՒՏ» յայտնի բօմանի փոխադրութիւնը:

Նորերս Մօսկվայում վախճանված Սօլդա-տենկովի կտակի մէջ մի նշանաւոր գումար

յատկացրված է Կայսերական գեղարուեստա-կան ակադէմիայի օգտին, որպէս ֆօնդ թօ-շակներ տալու համար այն նկարիչներին եւ անձանց, որոնք ցանկանում են զբաղվել ա-սիական եւ մեր հեռու Արեւելքի ուսումնա-սիրութեամբ: Բաւական խոշոր գումար է թողնված եւ Մօսկվայի չքաւոր ուսանողնե-րին նպաստող ընկերութեանը: Սօլդատենկովի հարստութեան ծագման մասին ասում են հե-տեւեալը: Սօլդատենկովի Իվան անունով եղ-բայրը, մեռնելու ժամանակ, յանձնեց Կ. Սօլ-դատենկովին 150,000 ռ. գրամագուրն այն պայմանով, որ երբ ինքն ցանկանայ կամ հար-կաւոր համարէ՝ յանձնէ այդ գրամագուրնը կտակողի զաւակներին: Եւ ահա, 150,000 ռուբլին համարեա 15 միլիոնի հասցնելով, Կ. Սօլդատենկով իր ամբողջ կարողութեան կէսը թողեց եղբոր որդիներին: Բացի 300,000 ռուբ-լուց արհեստագիտական առեւտրական դպրոց բանալու համար, Սօլդատենկով Մօսկվայի ա-ռեւտրականների ընկերութեան նուիրեց մէկ միլիոն ռուբլի:

ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ մեզ գրում են. «Լուսնեակ» ընկերութեան կառավարիչ պ. Գր. Սօլդատե-րեանց ահա հինգերորդ տարին է, որ աշխա-տում է իր մի ծրագրի, այն է՝ հրդեհ ընկած եւ այրվող տաւթի ֆօնդանը հանգցնելու մի-ջոցի վրա: Վերջապէս, այս օրերս աշողու-թեամբ իրադրծելով այն, ինչպէս անդեկա-ցանք, արդէն զիմել է Թիֆլիսում բացվելը: Կովկասեան գիւղատնտեսական-արդիւնաբեր-կան ցուցահանդէսի վարչութեան՝ իր այդ գիւտի թէ մօզէլը եւ թէ մակարագիւր ի ցոյց դնելու: Այդ գիւտը, անշուշտ, մեծ յարմա-րութիւն ու զիւրութիւն պիտի տայ իր նպա-տակին ծառայելու, քանի որ Բագուի տեխնի-կական վարչութեան առաջարկված բոլոր մի-ջոցներից եւ ծրագրերներից եւ ոչ մէկը չէ ըն-դունված եւ հաստատված մինչեւ այսօր: Պ. Սօլդատերեանց, իր այդ գիւտը ցուցահանդէսում ի ցոյց դնելուց եւ քննութեան ենթարկելուց յետո, մտադիր է գիմելու ուր հարկն է մե-նաշնորհ ձեռք բերելու:

ԲԱՐՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ մեզ գրում են. «Մայիս ամիսը շատ անձրեւային էր, Հեղեղները մի քանի անգամ լանդի, փչացրել են խնձորն» եւ երթեկութիւնը մի օրով կամ մի քանի ժամով դադարեցրել: Սարերից էլ սպանված գոմէշների, եղջերի դիակներ է դուրս ածում գետը: Հիմա էլ սկսվել են աշնանային եղա-նայները: Առաւօտից մինչեւ երեկոյ ծլում է, տները կաթում են: Հացը վաղուց են անում: Գիւղացիք: Գոնէ եղանակները չը լուսացան, որ հասած գարիները հնձեն ուտեն, մինչեւ ցո-րենի համեմը: Յօրենը ծախվում է պուրը 1 ռ.—1 ռ. 10 կ., իւրը 8 ռ., պանիրը 2 ռ., ձուռն հարկը 1 ռ., միսը 10—12 կօպէկ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԱՅԻՑ

Լայպցիգ, յունիսի 10-ին

Վերջերս գերմանական ուսանողութեան շըր-ջանում մի մեծ չարժում էր սկսվել՝ գերմա-նական համալսարաններում ուսանող արտա-սանմանցիների դէմ: Այդ չարժումը արդէն կամաց-կամաց սկսում է արձագանք գտնել եւ մասնով մէջ: Բանը նրանում է, որ գերմա-նական ուսանողութեան մի մասը, աւելի չօվի-նիստական ոգով տոգորված, ինքի մարմնը նայում այն երեւոյթի վրա, որ արտասանման-ցիները, իրանց հաւասար իրաւունքնե-րն ու իրաւ, դալիս են Գերմանիա եւ օգտվում իրանց համալսարաններից, ինստիտուտներից, իրանց ուրիշ բազմաթիւ արհեստագիտական հաստատութիւններից, եւ իբրեւ փոխարինու-թիւն այդ բոլորի (իբրեւ ուսումնական), տա-լիս են մի չնչին մասը այն հակայական ծախ-սերի, որ գերմանական ժողովուրդը անում է այդ հաստատութիւնները իրաւ Բացի այդ, ար-տասանմանցիների այդ մեծ հոսանքը գերմա-նական համալսարանները վնասակար են գրա-նում եւ այն տեսակետից, որ այդ ուսանողնե-րը, իւրաքանչեւ գերմանական գիտութիւնը, սկսում են իրանց դէմ խիստ մրցութիւն բոլոր գիտական եւ տեխնիկական առարկաներում: Այդ երկու մեծ «չարիքներ» առաջն առնելու համար, առաջարկում են բարձրացնել արտա-սանմանցիների ուսման վճարի քանակութիւնը եւ դրանով, մի կողմից նուազեցնել արտա-սանմանցիների հոսանքը դէպի գերմանական համալսարանները, միւս կողմից թոյլ չը տալ

նրանց ձրիապէս օգտվել գերմանական կուլ-տուրայից: «Մենք, ասում են, չենք կարող օ-տարներին բան նուիրել, երբ ինքներս աղքատ ենք»:

Այս առաջարկի ոչ-կողմնակիցները գտնում են այդպիսի մի ընթացք անպատշաճ: Գեր-մանիայի համար, նոյն իսկ վնասակար է էնց իրանց շահերի տեսակէտից: Ընդհակառակը, ասում են, «ոչ միայն արտա-սանմանցիների դէմ չը պէտք է կանգնեցնել, այլ պիտի չինական պատեր, այլ նրանց հո-սանքը պէտք է չոյէ մեր աղքատին ինքնասի-րութիւնը, որ, Գերմանիան, ընդունվելով արտասանմանցիների կողմից իբրեւ գիտու-թեան մի իրէպական աղբիւր, գալիս հեղեղում են մեր համալսարանները, մեր գիտական եւ արհեստագիտական հաստատութիւնները, իւ-րացնելու մեր կուլտուրան»: Ի՞նչու, ասում են, էգօրիստ լինել եւ գիտութիւնը միայն մեր մէջ ամբարել: Ի՞նչ որ գիտութիւնը միջազգային է, հետեւաբար, այդպիսի մի ընթացք գիտութեան գաղափարի վերաւորանք է: Ինչ վերաբե-րում է գերմանական համալսարանների ընդու-նելութեան պայմաններին, առաջարկում են այսուհետեւ խորութիւն չը դնել արտասա-նմանցիների եւ տեղացիների մէջ, պահանջել հաւասար պարտաւորութիւններ, տալ նրանց հաւասար իրաւունքներ: Մինչեւ այժմ բոլոր ֆակուլտետներում ընդունում էին արտասա-նմանցիներին որ եւ է միջնակարգ դպրոցի վկայականով (մի արտօնութիւն, որ վայելում էին միայն արտասանմանցիները): Վերջերս, սա-կայն, դուրսարկութիւններ են առաջացնում, մաս-նաւորապէս բժշկական եւ փիլիսօփայական ֆակուլտետներում, որտեղ ընդունվելու համար պահանջում են գիմնադիական վկայական:

Անշուշտ այս չօվինիստական արշաւանքը արտասանմանցիների դէմ պէտք է որ եւ է հետեւանք առաջացնել եւ կարծում ենք ան-շուշտ ի վնաս արտասանմանցիների:

Վերջերս այստեղի բժշկական ֆակուլտետի ուսանողները մի խնդրագիր ներկայացրին մի-նիստութեան, որով խնդրում էին թոյլ չը տալ այլ եւս կանանց բժշկական ֆակուլտե-տները մտնել, աւարկելով թէ նրանք այդ ֆա-կուլտետի համապատասխան վկայական չունեն (այստեղի բժիշկ ուսանողներին համարեա բոլոր Թուրստանից են եւ հրէական): Իբ-րեւ հետեւանք այդ բողոքի, նորերս մի նոր օրէնք դուրս եկաւ, որի հիման վրա կանայք միայն այն դէպքում կարող են բժշկական ու-սանող արձանագրվել, եթէ կը ներկայացնեն գիմնադիական վկայական (ոչ աղջկանց, այլ տղերանց գիմնադիայի վկայական):

S. Պալաքեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԻ

Աւստրիական պատգամաւորութիւնը քնն-նում էր արտաքին գործերի մինիստրութեան բիւլէտը: Լեհացիները նորից գանգատվում էին վարչական քաղաքների դէմ: Որոնց պրու-սական իշխանութիւնները ենթարկում են լե-հական բանւորներին: Երիտասարդ չէխերի հետոք Գաֆտան նկատեց, թէ այն նախա-գգուշութիւնները, որ կոմս Քոլաթօյսկի արեց իր ձառի մէջ մակեդոնական կոմիտէից, ար-դարացի չէ. այդ նախազգուշութիւններով պէտք է Կ. Պօլիս զիմել, որովհետեւ մակեդո-նական շարժման աղբիւր թիւրքաց անպիտան վարչութիւնն է: Նոյն հետոք ցաւակցութիւն յայտնեց, որ հասալայի կոնֆրէնցիայի ակտերը ստորագրող պետութիւնները վերջ չը դրին հարաւ-աֆրիկական պատերազմին: Գերմանա-կան նալոնայիստ Վօլֆ, չօչալիկով նոյն ինչերը, յանդիմանում էր աւստրո-ունգարա-կան կառավարութիւնը չէզոքութիւնը խախտե-լու համար, ի նկատի ունենալով, որ Անգլիան ձիւր եւ ուղղամթերեմբէն է գնելու Աւստրո-Ունգարիայում: Այդ ժամանակ Վօլֆ անգլիա-ցիներին աւազակ ժողովուրդ անուանեց: Ապա Վօլֆ բողոքեց Բիսմարկին արձան կանգնեցնե-լու արգելքի դէմ էգէրում եւ ապացուցանում էր, որ միայն Բիսմարկ Բերլինը դաշնագրու-թեան օգնութեամբ Աւստրիայի համար պահ-պանեց մեծ պետութեան նշանակութիւնը: Աւստրիական բարձր չըլանները պարտաւոր էին իրանք արձան կանգնեցնել Բիսմարկին Հօֆբուրգում, էրցհերցոգ կարլ արձանի կող-քին եւ մակագրել վրան՝ «Նրան, ով բարեկա-մութիւն ցոյց տուեց Աւստրիային, —բարխտա-գէտ կայսր Ֆրանց Յովսէփ»:

Կ. Պօլիսը գրում են Սօֆիայի լրագիրնե-րին, որ թիւրքաց դաւանութիւնների մինիստ-րը հրաւիրեց բօլշարական էկզարխին եւ յանձնեց նրան Մակեդոնիայի եւ Ալբանիայի վրայէթները բօլշարական ուսուցիչներին ա-նուանական ցուցակը խիստ հրամայելով՝ ան-սպալող արձակել այդ ուսուցիչներին քննու-թիւնները աւարտելուց յետոյ: Եկզարխը կրա-րական կերպով հրաժարվեց կատարել մինիստ-րի հրամանը, առարկելով, որ եթէ այդ ու-

սուցիչները որ եւ է յանցանք գործել են պե-տութեան առաջ, դրա համար Թիւրքիայում դատարան կայ, որը կարող է դատել նրանց: Այդ բերանացի հրամանից յետոյ, էկզարխը պաշտօնական գրաւոր հրաման ստացաւ: Էկ-զարխն էլ գրաւոր կերպով կրկնեց իր մեր-ժումը կատարելու մինիստրի հրամանը: Տեղի ունեցաւ երրորդ հրաման, այս անգամ լի սպանալիքներով, որ եթէ էկզարխը չի կա-տարի մինիստրի հրամանը, կառավարութիւնը հարկադրված կը լինի վերացնել սուլթանա-կան իրաւէն, որով էկզարխին իրաւունք է տրվում ուսուցիչներին վկայականներ տալ:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

4 յունիսի

ԽԱՐԿՈՎ, Մի քանի տեղերում, ուր անձ-րեւներ չը կային, ցորենը բարձր մասերում հնձում են իբրեւ խոտացու: Սաստիկ վնասվում է երաշտից Սլավոնսոբերեան գաւառը:

Նիժնի-Նովոգորոդի Նիժնի-Նովոգորոդի մօտ, Լինդ գետի վրա, ձուկ որսալու ժամանակ, «Московский Листок» լրագրի հրատարակիչ Պատուխով յանկարծ ատրճանակի հարուածով վերաւորեց մի գիւղական ութ տարեկան տղա-ին: Վնասվածին տարան հիւանդանոց. նրա դրութիւնը անյուսկան է:

Կիւիվ: Գիշերը մեծ հրդեհ տեղի ունեցաւ նաւահանգստում, այն տեղում, ուր կենտրո-նացած են փայտի պահեստներ, տասնեակ հա-զար սառնեղաններ եւ մեծ քանակութեամբ չի-նութեան փայտեղէն: Հրդեհը սկսվեց տասն եւ մէկ ժամին եւ շարունակվեց մինչեւ առաւօ-տեան վեց ժամը: Կրակը հանգցնում էին հինգ հրդեհաչէլ բաժանմունքներ: Մեծ դժուարու-թեամբ աշողվեց առանձնացնել կրակը. եռան-դուն օգնութիւն ցոյց տուեցին հազար զինուոր-աներ: Այրվեց 150 սառնեղան:

ԼՕՆԴՈՆ: Կիտլենդ հաղորդում է Պրէտո-րիայից. «Վիրմանսրուտի մօտ, 20 մղոն դէ-պի հարաւ Միդլսքոթից Տրանվալում, Վիկտորիայի 250 հեծեալ հրաշանաձիգներ, ո-րոնք Վիտսոնի զօրաբաժնից անջատված էին գնում, Ստէնլօդապոլիսի մօտ կանգ առնելու ժամանակ մայիսի 30-ին յանկարծ բօշրների զօ-րեղ զօրաբաժնի յարձակման ենթարկվեցին: Բօշրները սողալով մօտեցան նրանց եւ սպանիչ կրակ սկսեցին թափել բանակի վրա: Երկու օֆի-ցեր եւ 16 զինւորներ սպանվեցին, 4 օֆիցերներ եւ 38 զինւորներ վիրաւորվեցին, 2 օֆիցեր եւ 50 զինւորներ ազատվեցին փախչելով վաղ-սուր, միացանքներ գերի ընկան եւ յետոյ ար-ձակվեցին Մաքսիմի երկու թնդանօթները ըն-կան թշնամու ձեռքը»:

ԱԴԷՆ: Շնորհիւ արաքընթացութեան, անգ-լիական երկու զօրախմբեր հասան Ջէքիլէ, Դօլբօխանդա երկրում, որը գտնվում է՝ 140 մղոն հեռաւորութեամբ Բուրբուրից եւ 20 մղոն հեռաւորութեամբ Խելլէից, մօլայի բէգի-դէնցիայից:

ԼիվէրՊոլ: Սպանիական «Ելենա» չոգե-նաւի այստեղի նաւաչխարանից դուրս գալու ժամանակ նրա վրա պայթեց գլխաւոր չոգե-կաթան, որի ժամանակ երկու մարդ սպան-վեց եւ չորս հոգի վիրաւորվեցին: «Ելենա» նաւը վերադարձաւ նաւաչխարանը:

ԼՕՆԴՈՆ: Վարմաւտ մօտ Բէյլէրի զօրաբաժ-նի վրա գնդապետ Վիլհոմ յարձակման մասին արած հաղորդագրութեան առիթով «Բէյլէրի գործակալութեան» հաղորդում են Դուրբանից, յունիսի 2-ից, հեռագրի ուրիշ աղբիւրից, որ հաստատում է «Բէյլէրի գործակալութեան» սկզբնական տեղեկութիւնը գլխաւոր գծերով, բացի միայն հրամանատարների անուններից, որոնք երկրորդ հեռագրի մէջ բացակայում են: «Բէյլէրի գործակալութիւնը» կարծում է, որ պաշտօնական հեղուած վերաբերում էր հա-ղորդագրութեան այն կէտին, որը ասում էր, թէ յարձակումը կատարված էր հէնց Բէյլէրի վրա:

Կ. ՊՕԼԻՍ: Պետական պարտքի դրամարկի վարչական խորհուրդը դիմեց Պարիզ օսմա-նեան բանկին խնդրելով հսկել, որպէս զի բօլ-շարական փութառութեան վերաբերեալ բա-նակցութիւններում նախատեսված լինի Արե-ւելեան Բումբիլայի ապառիկների տոկոսների վճարումը:

Ի նկատի ունենալով Կրեմլէ կղզու վրա չա-րունակվող շարժումը կղզին Յունաստանի հետ միացնելու համար, Բ. Դուրը դիմեց մի շրջաբերականով չորս հովանաւորող պե-տութիւնների դեսպաններին, որի մէջ ուշադ-րութիւն է հրաւիրում այն բանի վրա, որ Կրեմլէի ազգային ժողովը շարունակում է

խախտել օսմանն ան կառավարության բարձրագույն իրաւունքները եւ խնդրում է վերջ դնել ազդեցութեան շրջան պետութիւնների պատասխանով լուրերի համեմատ, Բ. Դուռը գոհացել է: Թիւրքաց ղեկավարները պաշտօնական եւ զրաւական տեղեկութիւն են ստացել, որ պետութիւնները չեն թող սայ status quo-ի ոչ մի փոփոխութիւն կրեալի վրա:

Պէկին. Դիպլոմատիական մարմինը համաձայնութիւն կայացրեց այն միջոցների հարցի վերաբերմամբ, որ պէտք է տրվեն փոխառութիւնը ապահովելու համար: Միայնակ Նախնայների կառավարութիւնը համաձայնեց չը պնդել իր դրած պայմանների վրա եւ ընդունել մաքսահարկերի բարձրացնելը 50%-ով: Փոխառութիւնը բաց թողնելու եղանակի վերաբերմամբ, որով Ձինաստանը պէտք է վճարէ պատերազմական վարձատրութիւնը, դիպլոմատիական մարմինը միաձայն համաձայնեց արժէթղթերը բաց թողնելու առաջարկութեան հետ:

Բէլգրադ. Ինչպէս երեւում է այստեղ ստացված պաշտօնական տեղեկութիւնից, ապառաժութիւնը Նովո-Բազարում, որին մասնակցում էին հազարից աւելի ալբանացիներ, ծագել էր չը սիրած գայմագամին նշանակելու պատճառով: Ապառաժները ստիպեցին նրան փախել Սէնիկայ: Նովո-Բազարում արդէն հինգ օր է խնդրեցին փախելու են, չարժուժը ուղղված է նոյնպէս ախտեղի սերը աղ-գարնակութեան դէմ:

ԿԱՊՇՏԱՆ. Այստեղ հաղորդում են, որ վերջին երկու օրվայ ընթացքում Պօրտ Ելի-սովետում ժամատախտով հիւանդանոցում երեք նոր դէպքեր կային, երկուսը Մէյլանդում եւ մէկը Սիւնոստանում: Ընդամենը մինչեւ այժմ յայտնի է 714 հիւանդացողների մասին, որոնցից 398 մեռել են:

ՊՐԱԳԱ. Կայսրը այսօր առաւօտ ճանապարհ ընկաւ Տէրէզինշտատ Կայսրանում կայսրը չորհրդակցութիւն յայտնեց գեղեցիկ եւ սրտազին ընդունելութեան համար: Պրագայում ապ-րող օտարազգիները—ռուսները, բոլգարները եւ բելգիացիները—յանձնեցին նախնազապետին ֆրանսերէն լեզուով գրված մի ուղերձ կայսրին մատուցանելու համար:

ԼՕՆԴՈՆ. Նօրվալպոնտից հաղորդում են, որ այստեղի չըվանում բռնիների եւ Կապի-գաղթականութեան նրանց հետ միացող կօլ-նիստների թիւը չարունակում է աճել:

ՇԱՆԻԳՆԱ. Սիւնիֆուից ստացված տեղեկու-թիւնների համեմատ, երէկ այնտեղ վարձան-վից Շանիգունի նախնազապետ Իւանչիկայի մայ-րը Այստեղ լուր կերպով յոյս են տածում, որ, որքան հնարաւոր է, միջոցներ ձեռք կառն-վեն, որպէս զի նախնազապետը չը թողնէ իր նախնազը մինչեւ անգամ կարճ ժամանակով:

5 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Յունիսի 5-ին, առաւօտեան 7 ժամին, Պետերսօֆում Նորին Մեծութիւն Թաղուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆէօդօրով-նա բարեկալոցութեամբ աղջիկ ծնեց, եւ ա-նունը դրվեց Անաստասիա:

Գնեւրալ-մայօր Արանդարէնկօ Ֆէրզանեան չըվանի զինւորական նախնազապետ է նշանակ-վում:

Բաւարական ռուսաց ղեկավար բարձր Բոզե-նին հրամայված է Աթէնքի ղեկավար լինել:

Օրվոյի նախնազապետ Տրուքիկով նշանակ-ված է պատուաւոր խնամակալ կայսրուհու Մարիայի հիմնարկութիւնների խնամակալա-կան խորհրդի:

Հաղորդակցութեան ճանապարհների մի-նիստը, ճանապարհ ընկնելով տեսնելու Ռու-սաստանի հարաւի մի քանի ջրային ճանա-պարհների վրա կատարվող աշխատանքները, յայտարարում է, որ իր բացակայութեան ժա-մանակ մինիստրութեան կառավարութիւնը յանձնված է մինիստրի օգնական Մեասօէզով-ի վանովին:

ԲԱՅՈՒ. Ժամանակ եւ անցաւ դէպի հան-քային ջրերը, Պետերգօրսկ, Բուխարական է-միւր:

ԲՕՍՏՈՎ ԴՕՆԻ ՎՐԱ. Եարունակվում է շու-քը եւ չորութիւնը. երկիւղ կայ, որ լաւ հունձ չի լինի. խոտը չաղովեց:

Ստաւրօպօլի նախնազին հաղորդում են, որ Պրասիօվէյսկի գաւառում այս օրերս փոքրիկ խնձորի մեծութեամբ կարկուտ եկաւ. ընկնում էին սառուցի տձեւ խոշոր կտորներ: Սպան-ված են երեք մարդ: Այդիները բոլորը ոչն-չացրված են. կոտորված են շատ անասուններ. բազմաթիւ թշուառութիւններ է պատճառել: Բնակիչները զրա նման մի բան ամենեւին չեն յիշում:

Պէկին. Օտար ղեկավարներն առում են, որ աղորդութեամբ են ընթանում պատերազմական վարձատրութեան վճարման եղանակի վերա-բերեալ բանակցութիւնները: Դիւսպանները յոյս են յայտնում, որ դեռ մինչեւ յուլիսի վերջը բանակցութիւնները բոլորովին կաւարովեն: Զանապարհի դիրքերը Պատիֆուում հրա-մանագրի ստացաւ միջոցներ ձեռք առնել 3000 մարդուց բաղկացած չինական զօրքը Պէկին փոխադրելու համար:

ՀԱՄԳԱ. Հօլլանդական կառավարութիւնը զինեց անգլիական կառավարութեան, ինչպի-սով դիրքութիւններ տալ իրան կենսական մը-թերքներ, հագուստներ եւ այլն ուղարկելու նպատակով հարուային Աֆրիկա կանանց եւ երեխաների համար բռնական բանակներում: Անգլիական կառավարութիւնից գոհացուցիչ պատասխան ստացվեց:

ՊԱՐԻԶ. Սենատը, երկարատեւ փնտրանու-թիւններից յետոյ, ընդունեց ընկերակցութիւն-ներին վերաբերեալ օրէնքի վեցերորդ յօդուա-ծը, որ վերաբերում է կալուածքներ ձեռք բե-րելուն եւ կառավարելուն:

Պէկին. Ֆրանսիական երկու բրիգադաներից մէկը կը հեռանայ Պէտլիիի նախնազին, Չոր-քերի ուղարկելը տեղի կունենայ յուլիսի 12-ի եւ օգոստոսի 7-ի միջեւ:

ԼՕՆԴՈՆ. Երէկվան լրագրներում ապված կորուստներից յուրացվում հաղորդվում է, որ ուրբաթ Գառուսովին ժող տեղի ունեցաւ լուրջ կոիւ, որի մէջ սպանվեցին 3 եւ վիրաւորվե-ցին 12 մարդ:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱՆԼԵՄԻՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻԳ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ԲԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ Ր Ա Ի Է Ր

Յունիսի տախն, կիրակի, առաւօտեան ժա-մը 12-ին, Կուկիայի Ե. Աստուածածնի եկեղե-ցում ժողով է լինելու նախկին երէցփոխ պ. Եսայի Աբրահամեանից գործընկեր եւ բացա-տրութեանը վերջնականապէս պարզ կերպով որոշումն կայացնելու եւ մի երկու դրամա-կան խնդիրներ լուծելու, ուստի սրանով հրա-ւիրվում են պ. պ. Ժիւրի Ներկայ լինել յիշեալ եկեղեցում ժողովին մասնակցելու:

Գործակալ Բ. մասի Թիֆլիսի
Գրիգոր աւագ քահ. Մանդակունի
(չ. Կ.) 1—2

Լ յ յ ա տ ե ս ա լ

„ԲԱՆԿԱՆԿԱՆ ԽՆԴԻՐ“ Ի ՇՈՒՐՁԸ

Մետրոպ քահանայ Մելանի
Ծախվում է Թիֆլիսում Կենտրոնական եւ Կովկասեան գրաւաճառանոցներում եւ Բա-թումում՝ հեղինակի մօտ:
Դիւր՝ 50 կօպ. 3—3

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլ-տուութեամբ: Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոք-րը—3 ռ. եւ 1 ռ. 50 կօ:



ՆՈՐ ՄԻՋՈՑ

Մազերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփր Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ՁՈՒՒ ԿԱԹԸ

Երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատ-ճառած սեւութիւնը, մուկները, տալիս է կա-շուին քնքշութիւն եւ սպիտակութիւն: Այդ գինը չափաւոր են. մեծ արուակը, արկղի-կի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ռ. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆումերական եւ դեղաւաճառական խանութներում: Գլխա-ւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինական փողոց տ. № 15, բնակա-րան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դե-ղատան ապրանքների վաճառման ընկերու-թեան խանութում: Երեսինեան հրապարակ եւ նրա բաժանմունքները, Միջայլեան փո-ղոց եւ Բազումում. նաեւ Միջայլեան կա-մուրջի վրա, Պապովի եւ Արիստակովի դե-ղատներում: Օտարաբաղաճաքիների պա-տուէրների կատարվում են անմիջապէս պատուով. 22—100

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵԻԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

համար հարկաւոր են երկու ուսուցիչ, մէկը, որ աւանդելու է դպրոցական գաւառաններում բնական պատմութեան 8, բնագիտութեան 7 դաս. իսկ պատրաստականներում թուարանու-թեան 11 դաս 1920 թ. ոտնկով, լինելու է հա-մալարանաւարտ բնագէտ կամ մաթեմատիկոս. միւսը, որ աւանդելու է պատրաստականնե-րում ռուսաց լեզուի 18 դաս, պէտք է լինի ռուսացական ճեմարանը (учительский инсти-тут) աւարտած կամ պատշաճաւոր վիպական ունեցող լրաւատէր ուսուցիչ: Ցանկացողները թող դիմեն Ե. Նախչեւան Ե. Ուոն, Ректору Семинарии, Г. Чарихьяну.

Տեսուչ դպրանոցի պետական խորհրդական Գ. Չարիխյան
(չ. չ.) 1—6

Կրկնակի իտալական հաշուապահութիւն իմացող

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

տեղ է որոնում: Համաձայն է լինել հաշուա-պահի օգնական:
Հասցէ՝ Почтамт, предъявителю вв. «Тифл. Листва» № 3871. 1—1

Լ յ յ ա տ ե ս ա լ

ԱՇԼԳ ՖԻԶԱԶՈՒ ԵՐԳԵՐԸ

Ծախվում են զանազան քաղաքների գրաւա-ճառանոցներում: 2—3

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՐԱՆՈՅՈՒՄ

Ծախվում են հետեւեալ հայերէն գրքերը՝

ԷՖՐԻԿԵԱՆ Հ. Ս., Գրպանի ատլաս, աշխարհագրական փնտրագրական եւ այլ կարեւոր տեղե-կութիւնք, Վենետ. 1901 թ. գ. 1 ռ. 75 կ.
Ա.ՆԱՐՈՆԵԱՆ Ա. Ս., Պատկերներ (վերջին տաճկաշաղկ կենսաբ.), Մոսկով գ. 1 ռ. 1.
ԼԷՅՈ, Հայկական տպագրութիւն, մեր կենսաբ., գրականութիւնը անցեալում, Թիֆլ. գ. 1 ռ. 50 կ.
Ա.ՆԱՐԵԱՆ Դ., Բանաստեղծութիւններ, Թիֆլիս, 1 ռ. 50 կ.
Ա.ՐԵՆԵԱՆ ՄԱՆ., Հայոց լեզուի ուղղագրութիւնը, Թիֆլ. գ. 50 կ.
ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԻՍ., Հայոց գիրը, տառերի ծագումը, դիւտը, պատմական փաստաւից տե-ղեկութիւնները, Թիֆլ. գ. 1 ռ. 50 կ.
ԵՂԻՇԵԻ Պատմութիւն Վարդանանց՝ դրարար լեզուով—50 կ., աշխարհագրաբ.՝ 60 կ.
ԱՐԻՍՏԱԿԻՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՏԻՍ՝ վարդապետի Հայոց պատմութիւնը—աշխարհ., Ալեք. գ. 60 կ.
ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՏՈՒ Հայոց պատմութիւնը եւ Վանան Մամիկոնեանի գրած թուղթը, Ալ. գ. 80 կ.
ՄԻԹԱՐԵԱՆ ԱԼԷԿՍ., Տաղեր ու խաղեր, ժողովածու ժողովրդական երգերի եւ պարերգերի, Ալեք. գ. 60 կ.
ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆ ՄԱԿ. Եպիսկ., Արցախի նախնազը, ներկայիս Շուշին իր բոլոր գաւառներով, Բագու, գ. 1 ռ. 50 կ.
ԱՆՎԷՐԴԵԱՆ ԳԵՐԳ., Սպաթ-Նօփա, Մօսկով, գ. 50 կ.
ԿՕՄԲԻ, Խնամատարութիւն երեխայոց մարմնական եւ բարոյական, Պետերբ., գ. 1 ռ. 20 կ.
ԺՕՐԺ ՕՆԷ, Դոկտոր Թաւո, գոյութեան կոիւններ, Մօսկ., գ. 80 կ.
ՎԱՐԴԱՆԵԱՆ ՓԻԼԻՊ., Թարգմանութիւնները. 1) Սմայլ—Բնաւորութիւն—1 ռ. 50 կ., 2) Սմայլ—Ինքնօգնութիւն—1 ռ. 50 կ., 3) Հոմերի Իլիականը—1 ռ., 4) Հոմերի Ոդիսականը—1 ռ. 20 կ., 5) Սիրոյ, աշակերտ. յիշատակարան, 6) Արեւելեան վիպաշար, պատկերազարդ—20 կ., 7) Մահմէդի կենս-քը—1 ռ. 20 կ., 8) Շիրէր—Աւագակներ—50 կ., 9) Կօլուս—15 կ., 10) Ռոբինզօն—20 կ., 11) Նոյնայի բերդը—30 կ., 12) Ռէյնսկէ աղուէսը—60 կ., 13) Բէաթրիչէ—30 կ., 14) Ապէլիններից մինչեւ Անդերս—20 կ.
Դիմել՝ Тифлисъ. Въ Центральную Книжную Торговлю. (չ. ու. Կ.) 1—3

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

վաճառվում են Ա. Պօղոսեանի գումարով հրատարակված հետեւեալ գրքերը

«Անդարդ Հանէսը», պատկերազարդ, թարգ. Լ. Մէլիք-Ա. դաւանի.	40 կ.
«Կարէն ու Մանէն»	40 »
«Եօթն աղաւ»	40 »
«Պատիկ ու Չափիկ»	40 »
«Նիզով դատաստան»	05 »
«Մաքսիմալ»	15 »
«Արդար ծերունի»	15 »
«Իւլիանկա»	10 »
«Ծափ արկածները»	10 »
«Ինչ է առում սենեակը»	10 »
«Պատու ծիսը»	03 »

Գումարով գնողներին զեղումով:
Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенбергъ“ (Лорисъ-Меликовская улица, № 11), Г. Галустяну.

Կ Օ Ն Ֆ Ե Կ տ Ի ե Ղ Ղ Օ Կ Ղ ա Գ Ի գ ո Ր ծ ա ր ա լ Ե

Փ. Ն. ՓՐԻԳՕՆԵԱՆ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Յայտնում է, որ իր գործարանում պատրաստվում են չաքարեղէնների ամեն տեսակ ար-տադրութիւններ, որոնք թէ իրանց յատկութեամբ, մաքրութեամբ եւ թէ մատչելի գնեցող մի ց ու մ են Ռուսաստանի առաջնակարգ գործարանների արտադրութիւնների հետ:
Պատրաստում ենք՝ կարամէլ մրգեղէնից (фруктовая карамель), կարամէլ լցված (съ начинкою), մարմէլաթ (пастиза), զէֆիր (зефир), դրաժէ (драже), քիւրմա-չաքար (курма-чаккар), Լեդենցի, Գործարանում աշխատում են հմուտ վարպետներ՝ մայրաքաղաքից հրաւիրված յայտնի վարպետի հակողութեան տակ:
Պատուէրները կատարվում են անմիջապէս եւ ճշգրտութեամբ:
Պրէյս-կուրանտը ուղարկվում է ցանկացողներին ձրի:
Պատուէրների համար դիմել՝ Тифлисъ, Нахаловка, Павловская улица, собственный домъ, № 12.
Թիֆլիսում մեր գործարանի արտադրութիւնները ծախվում են հետեւեալ մագաղինե-րում—Գ. Բայեան դուրեանի, Գ. Ս. Տէր-Սիմօնեանի, Զ. Ի. Սուլիսեանի, Զ. Պ. Պօպովի, Եղբ. Ս. Ի. Ս. Աբրահամօւի, Հաջի-Ռախմանօւի վարակական մագաղինում, Պ ե տ Ր ի Իտալական մագաղինում եւ այլն: Տեղեֆօն № 362:
32—100

Արդէն մամուլի տակ է եւ պրակներով (ВЫ-ПУСКАМИ) լոյս կը տեսնի

Իրակատար

ԲԱՆԱՐԱՆ ՌՈՒՍԵՐԵՆԻՑ ՀԱՅԵՐԵՆ,

ԿԱԶՄԵՑ Ե. ԴԱՂԱՇԵԱՆ

Շուտով կը բացվի բաժանորդագրութիւն եւ բաժանորդագրութեան պայմանները բառարանի նմուշով ձրիարար կուղարկվեն ցանկացողներին: Դիմել բառարանի կազմողին, Ա. Տ. Դաճախյաւ, Тифлисъ, Армянская Нерессыя Семинарія. 1—1

Թախանձագին խնդրում եւ Ռուսաստանի եւ արտասահմանի հայերին ու յայտնի է Ալեքսանդրօպօլից արդէն մի տարի անշայտ հեռացած Արշակ Հաջիբաբեան Կաթա-պետեանից բնակութեան տեղը կամ ով նրա մասին որ եւ տեղեկութիւն ունի՝ յայտ-նէ հետեւեալ հասցէով:

Тифлисъ, редакция «Имашъ», Аршалуеу Мхитарянцъ. 11—12 Յարութիւն Կարապետեանց

Մեծ-Ղարաբլիտայի կայսրանում պարագում եւ կօմիսիօնէրութեամբ զանազան տեսակ ապրանքներ տեղափոխելու: Պատուէրները կա-տարվում են ճշգրտութեամբ:
Դիմել՝ Б.-Караглисъ, Араму Матиянцъ. 5—5